ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ և ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ

ՀՀ, ք. Երեւան, Չարենցի 12, թիվ 53, 1-5, հեռ. (+374 10) 59 22 59, էլ. փոստ unibank@unibank.am

Էական փաստերը և տեղեկությունները ներառող հաշվետվություն թիվ 3, 22 մարտի 2016

Արժեթղթերի դասը՝ սովորական բաժնետոմս

Արժեթղթերի քանակը՝ 109,669,471 հատ

Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ 100 ՀՀ դրամ

Ստորագրող անձինք՝

Զաքար Բոյաջյան	**Վարչության նախագահի առաջին տեղակալ - ռիսկերի կառավարման տնօրեն**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 22.03.2016
Գոհար Գրիգորյան	**Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 22.03.2016
Դավիթ Պետրոսյան	**Վարչության նախագահի տեղակալ, Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 22.03.2016
Մեսրոպ Հակոբյան	**Վարչության նախագահի տեղակալ, Օպերացիոն սպասարկման և տեղեկատվական համակարգերի գծով տնօրեն**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 22.03.2016
Գուրգեն Ղուկասյան	**Վարչության նախագահի տեղակալ, Մանրածախ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 22.03.2016
Վարդան Աթայան	**Վարչության նախագահ - Գործադիր տնօրեն**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 22.03.2016

Տեղեկություններ Յունիբանկ ԲԲԸ պարտատոմսեր թողարկելու վերաբերյալ

Ի լրումն Բանկի 12.03.2016թ. Խորհրդի որոշման՝ 18.03.2016թ. Բանկի Խորհրդի որոշմամբ որոշում է կայացվել պարտատոմսերի թողարկումն իրականացնել 2 տրանշով, մասնավորապես՝

1-ին տրանշի համար թողարկել և տեղաբաշխել պարտատոմսեր 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 5,000,000 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 24 (քսանչորս) ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 8 (ութ) տոկոս արժեկտրոնային դրույքով, արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ, 50,000 հատ արժեկտրոնային պարտատոմսեր: Պարտատոմսի ձեռք բերման համար գնման նվազագույն ծավալը 1,000 ԱՄՆ դոլար է:

2-րդ տրանշի համար թողարկել և տեղաբաշխել պարտատոմսեր 10,000 (տաս հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 24 (քսանչորս) ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 12 (տասներկու) տոկոս արժեկտրոնային դրույքով, արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ, 25,000 հատ արժեկտրոնային պարտատոմսեր: Պարտատոմսի ձեռք բերման համար գնման նվազագույն ծավալը 1,000,000 ՀՀ դրամ է:

Թողարկվող պարտատոմսերն անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային պարտատոմսեր են, անբաժանելի են և փոխարկելի չեն:

Պարտատոմսերի վաղաժամկետ հետգնում և մարում չի նախատեսվում:

Արժեկտրոնների հաշվարկման օր է համարվելու պարտատոմսերի տեղաբաշխումն սկսելու օրվան հաջորդող 3-րդ, 6-րդ, 9-րդ, 12-րդ, 15-րդ, 18-րդ, 21-րդ և 24-րդ ամիսների համապատասխան օրերը:

Պարտատոմսերի տեղաբաշխման 1-ին տրանշը սկսվելու է Ազդագիրը Կենտրոնական բանկի կողմից գրանցման օրվան հաջորդող 5-րդ (հինգերորդ) աշխատանքային օրը և տևելու է 45 (քառասունհինգ) աշխատանքային օր, թողարկման և տեղաբաշխման օրը համընկնում է:

Պարտատոմսերի տեղաբաշխման 2-րդ տրանշը սկսվելու է Ազդագիրը Կենտրոնական բանկի կողմից գրանցմանը հաջորդող ինը ամսվա ընթացքում, թողարկման և տեղաբաշխման օրը համընկնելու է: